# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ուղղահայաց շերտավարագույրների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հունիսի 16-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/18-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2023 թվականի դեկտեմբերի 21-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագրով նախատեսված ապրանքի այլ բնութագիր ունեցող ապրանքով փոխարինման անհրաժեշտություն, որը գումարային արտահայտությամբ չի գերազանցում պայմանագրի գնի տասնհինգ տոկոսը:

Փոփոխության նկարագրություն՝

- Պայմանագրի 3.1 կետում «10 509 523.20 (տաս միլիոն հինգ հարյուր ինը հազար հինգ հարյուր քսաներեք դրամ քսան լումա) ՀՀ դրամ» բառերը փոխարինվել են «10 507 283.20 (տաս միլիոն հինգ հարյուր յոթ հազար երկու հարյուր ութսուներեք դրամ քսան լումա) ՀՀ դրամ» բառերով,
- Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» վերտառությամբ Հավելված N 1-ը փոփոխվել է,
- Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը փոփոխվել է,
- Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը փոփոխվել է:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 կետ

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**16.06.2023թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/18-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «21» դեկտեմբերի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Աղիզյանի (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմանները և հիմք ընդունելով 16.06.2023թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/18-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված 2985.66 քմ ուղղահայաց շերտավարագույրից 392 քմ ուղղահայաց շերտավարագույրը 164 քմ այլ բնութագիր ունեցող շերտավարագույրով փոխարինման անհրաժեշտությունն ու այդ նպատակով 1 377 600 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամի չափով նախատեսված ֆինանսական միջոցները, ինչպես նաև վերոնշյալ փոփոխությամբ պայմանավորված Պայմանագրի ընդհանուր գնի վերանայման անհրաժեշտությունը.

1.1. Պայմանագրի 3.1 կետում «10 509 523.20 (տասը միլիոն հինգ հարյուր ինը հազար հինգ հարյուր քսաներեք դրամ քսան լումա) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «10 507 283.20 (տասը միլիոն հինգ հարյուր յոթ հազար երկու հարյուր ութսուներեք դրամ քսան լումա) ՀՀ դրամ» բառերով,

1.2. Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» վերտառությամբ Հավելված N 1-ը փոփոխել՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի,

1.3. Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը փոփոխել՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի,

1.4. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը փոփոխել՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 3-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելը՝ 12.12.2023թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:**

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 5 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| *Դատական դեպարտամենտ* | *«ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ* |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ Գալշոյան 15/2 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 03530009 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 2051722030071001 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| **Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան** | **Տնօրեն՝ Հ. Աղիզյան** |
| /ստորագրություն/ Կ.Տ. | /ստորագրություն/ Կ.Տ. |

Հավելված N 1
« 21 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 1 համաձայնագրի

*(Հավելված N 1
« 16 » « 06 » 2023թ. կնքված
N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/18-1» ծածկագրով պայմանագրի)*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| | Ապրանքի | | |
|---|---|---|---|
| հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | 39515440/1 | ուղղահայաց շերտավարագույր | Ուղղահայաց շերտավարագույր՝ առավելագույնը 2593.66 քմ, վերևի քիվը ալյումինե պրոֆիլով՝ չափսը. լայնություն՝ 4.5սմ x բարձրություն՝ 2.5սմ: Աշխատացնող մեխանիզմները պլաստմասե: Գործվածքը պոլիմերային նյութով տոգորված՝ լայնքը 9-13սմ: Ներքևի ծանրոցները պլաստմասե, 9-13սմ լայնքով: Ներքևի շղթան և աշխատացնող շղթան պլաստմասե: Գույնը՝ բաց ծիրանագույն: Ուղղահայաց շերտավարագույրներից առնվազն 2500 քմ տեղադրվելու է Երևան քաղաքում: Ուղղահայաց շերտավարագույրները պետք է լինեն չօգտագործված: Ուղղահայաց շերտավարագույրների նախօրոք չափագրումը, տեղափոխումը, հնի ապամոնտաժումը (եթե այդպիսիք կան), նորի տեղադրումը (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ բոլոր դետալները և նյութերը) պետք է իրականացվեն Վաճառողի կողմից: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելուց հետո քսան օրացուցային օրվա ընթացքում Վաճառողը՝ Գնորդի պահանջով պարտավոր է այցելել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշված հասցեներ, կատարել համապատասխան չափագրումներ և արդյունքները ներկայացնել Գնորդի հաստատմանը: Պատվերը համարվում է ձևավորված՝ հաստատված չափագրման արդյունքների մասին Գնորդի կողմից Վաճառողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնելու օրը: |
| 2 | 39515450/1 | հորիզոնական շերտավարագույր | Բաղկացած են քիվերից, ալյումինե հորիզոնական 25 մմ շերտերից: Քիվերը պատրաստված են բարձր ամրության ալյումինից: Քիվերն ու ժապավենները ծածկված են էմալի փոշով: Լուսային հոսքերը կարգավորվում են պտտվող թափանցիկ ձողով և պարանով, որն օգտագործվում է վարագույրները բարձրացնելու համար: Հորիզոնական շերտավարագույրները կոմպլեկտավորված են պտտվող մեխանիզմով և պարանի ֆիքսման ունիվերսալ սեղմակով, որը թույլ է տալիս շերտերը բարձրացնել ցանկացած բարձրության վրա: Շերտավարագույրի ստորին մասում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տեղակայված է ստորին ծանրոց՝ 25մմ, որը ապահովում է շերտավարագույրի առանձգականությունը: Թիթեղների գույնը՝ սպիտակ: |

**ԳՆՈՐԴ**

***Դատական դեպարտամենտ***

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան**

---------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

***«ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ***

Հասցե՝ Գալշոյան 15/2

ՀՎՀՀ՝ 03530009

Հ/Հ՝ 2051722030071001

«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Տնօրեն՝ Հ. Ազիզյան**

---------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ.

**Հավելված N 2**
**« 21 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 2*
*« 16 » « 06 » 2023թ. կնքված*
*N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/18-1» ծածկագրով պայմանագրի)*

## ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | քմ | 3520 | 9 129 683.2 | 2593.66 | Երևան քաղաքում և ՀՀ մարզերում տեղակայված ՀՀ դատարանների նստավայրեր և Դատական դեպարտամենտի վարչական շենք | 2593.66 | Պատվերի ձևավորմանը հաջորդող օրվանից հաշված՝ 60 օրացուցային օրվա ընթացքում: |
| 2 | քմ | 8400 | 1 377 600 | 164 | ք. Երևան, Արա Սարգսյան 5/1 | 164 | 2023 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը: |

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան**

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
***«ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ***
Հասցե՝ Գալշոյան 15/2
ՀՎՀՀ՝ 03530009
Հ/Հ՝ 2051722030071001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Տնօրեն՝ Հ. Աղիջյան**

/ստորագրություն/
Կ.Տ.

**Հավելված N 3**
**« 21 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 3*
*« 16 » « 06 » 2023թ. կնքված*
*N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/18-1» ծածկագրով պայմանագրի)*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|
| h/h | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին, այդ թվում՝ | |
| | | | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 39515440/1 | ուղղահայաց շերտավարագույր | 9 129 683.2 | **9 129 683.2** |
| 2 | 39515450/1 | հորիզոնական շերտավարագույր | 1 377 600 | **1 377 600** |

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան**

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
***«ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ***
Հասցե՝ Գալշոյան 15/2
ՀՎՀՀ՝ 03530009
Հ/Հ՝ 2051722030071001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

**Տնօրեն՝ Հ. Աղիզյան**

/ստորագրություն/
Կ.Տ.